Արձանագրություն N 2

<u>ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/01 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի</u>

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

23 նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ (ԳԱՊ)՝ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Աշոտ Ավետիսյան |
| (ԳԱ)՝ | Դավիթ Գրիգորյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | Լիլիթ Մաղդեսյան |
| (ԲԱ)՝ | Ջուլիետ Համբարձումյան |
| քարտուղար՝ (ՄՀմ) | Հայկ Խաչատրյան |

<u>Հայտերի բացման արդյունքների մասին</u>

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտնեց, որ 18.11.2016թ.-ին հրավիրված հանձնաժողովի նիստը իրավազոր չլինելու պատճառով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի, երկու աշխատանքային օրով կասեցվել էր:

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 640,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 18.11.2016թ.-ի ժ 11:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել են՝

| N | Մասնակից | Հասցե |
|---|---|---|
| 1 | «Թասկ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 4/1 |
| 2 | «Երևան Տելեկոմ Սոլուշնս» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1 |
| 3 | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60 |
| 4 | «Յունիքոմփ» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Ե. Չարենց 37 |

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները՝

| Գնի առաջարկներ առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանումը | «Թասկ» ՍՊԸ | «Երևան Տելեկոմ | «Նորմա-պլյուս» | «Յունիքոմփ» |

| | | Սոլուշնս» ՓԲԸ | ՍՊԸ | ՓԲԸ |
|---|---|---|---|---|
| Տպիչ/պատճենահանման մեքենա/սկաներ (բազմաֆունկցիոնալ լազերային) (4 հատ) | 1,200,000 | 513,600 | 239,900 | 455,000 |

<u>Մասնակիցների հայտերի գնահատում</u>

Բոլոր Մասնակիցների

- հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.
- հայտերը գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից գնահատվել են բավարար՝ բացառությամբ «Թասկ» ՍՊԸ-ի գնային պայմանների, քանի որ դրանք գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

<u>Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին</u>

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/01 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

2. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/01 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Յունիքոմփ» ՓԲԸ-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

3. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/01 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի երրորդ տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Երևան Տելեկոմ Սոլուշնս» ՓԲԸ-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ 2016թ.-ի նոյեմբերի 30-ին, ժամը 11:00-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ Աշոտ Գրիգորյան

գնահատող անդամ (ԳԱ)՝ Աշոտ Ավետիսյան

| | | |
|---|---|---|
| (ԳԱ)՝ | ____________ | Դավիթ Գրիգորյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | ____________ | Լիլիթ Մաղդեսյան |
| (ԲԱ)՝ | ____________ | Ջուլիետ Համբարձումյան |
| քարտուղար՝ (ՄՀմ) | ____________ | Հայկ Խաչատրյան |